


ԱՅՐԻ ՎԱՆՔ

Ինչպէս կը նշմարուի առաջիկայ պատկերին մէջ, բոլոր մենաստանն՝ քառակուսի բրգանման պարիսպներով շրջապատուած է, որոյ հիւսիսային կողմը՝ բարձրանիստ ապառաժի վերայ կը գտնուի, իսկ արևմտեան կողմը բարձրաբերձ քարաժայռին վերայ յեցած է. միւս երկու կողմն դաշտային է. Արևելքի փոքր դուռը դէպ ի գետը կը նայի, որ քանի մի քայլ հեռու ահեղ խոխոշանգը մեծ վիհ մի կը բանայ. իսկ առաջ դուռն արևմտեան կողմն է, ուսկից ներս մտած ժամանակ յանդիման կ'իլլէ մեծ ժամատուռն ուրբառայ վիմը, որ յարակից տաճարին՝ և հինգ մատրանց հետ միասին Եօթն եկեղեցիք կը կազմեն, ինչպէս երբեմն կը կոչուէր բոլոր մենաստանը. Այդի վանք կը կոչուի՝ որովհետեւ լերան լանջին վերայ շինուած է. շինուածոց մէջէն ընդարձակագոյն է ժամատուռն. Ա. եկեղեցին քառակուսի զրեթէ ութ ք. երկայն. յատակէն կը բարձրանան չորս ստուար սիւնք՝ հաստ պատուանդանօք և խոյակօք, որոց վերայ ձգուած են լայնաբաց կամարքն, կազմելով կիսաբոլոր և քառակուսի գմբէթ մի, որ պարզուածեմբ հանգերձ՝ ունի իւր մեծ վայելչութիւնն և զրեթէ իւր տեսակին մէջ մէկ հատիկ է. մի միայն լուսամուտ, որոյ մօտ՝ տանիքին արևելեան կողմը կայ փոքրիկ սիւնաղարդ զանգակատուն մի. Տիւղուա այս ձև կը համարի իբրու նախատիպար արարացի կամ մարիկ կամ արաց և խորանաձև գոգոց. Բաց ի չորս մեծ կամարաց՝ ութ այլ ևս փոքր կամարք կը կազմեն ձեղունք, նոյնպիսի խորիւրով և ճարտար դրուագներով, և սեանց խոյակներն և զարդերն անման են իրերաց, իսկ դրանց ալուծախ կողմի պատուանդանաւոր խաչվիմից քանդակքն յոյժ գեղեցիկ են. այն դուռը որ ժամատունէ Բ. Տաճարը կը տանի, անոր ներսի կողմի կամարին վերայ արձանագրուած է՝ միանաձանց աշխատութեամբ շինուած տաճարին յիշատակը, 1214 թուին. Արժանաւոր շինուած արժանապատիւ շինողաց, որ Բագրատունեաց հաւասար զարդարեցին. Հայաստանեայց եկեղեցիքը մեծագործութեամբ. նոյնպէս արժանաւոր են երկու խաչքանդակքն, մանաւանդ հիւսիսայինը. բայց հարաւայնոյն վերայ հնագոյն թուական մի կը նշմարուի երիցագոյն քան զշինութիւն եկեղեցւոյն. Գաւթին արևելակողմի երկու անկեանց մէջ կան երկու կրկնայարկ փոքրիկ մատուռք, դրան վերայ հարաւային կողմէն կայ արձանագիր մի, որ թուի թէ 1278ին գրուած է.

Այս տաճար երկար քառակուսի է, որոյ միջավայրը կը բարձրանայ արածայր անսին կաթողիկէն, անտի միայն լոյս ընդունելով. բնին հինգ աստիճան բարձր է ատենէն, կիսաբոլոր խորան մ'ունի, և երկու կողմանէ երկայնաձև կրկնայարկ մատուռք, որոց դռներն բնմին վերայ կը բացուին. արևմտեան կողմի մատուռք փոքր են քան զսոսա


և կրկնայարկ, և վերնայարկաց սիւնաղարդ դռներն՝ նեղ սանդուղիւ, ըով որմոց մէջէն բացուած են, և թուի թէ աւագորբերոյն աղօթատեղիք էին: Բովանդակ չէնքն կոփածոյ քարերով շինուած է՝ բաց ի միջնադռնէն: Տաճարիս խորանին մէջ երբեմն կը պահուէր Գեղարդն:



Այրի վանք կամ Գեղարդայ վանք.

Քրիստոսի՝ Հայոց սրբութեան պարծանքը, որ այժմ՝ յիշմիածին է՝ որոյ համար Այրի վանքը երբեմն Գեղարդայ վանք կ'ըսուի, ինչպէս լեռը՝ Գեղարդաւար, և ձորն՝ Գեղարդաձոր: Յայտնի չէ թէ երբ բերուեցաւ աստ այս սրբազան գործիքը, միայն ժե դարուն կը յիշուի. բայց վարդան աշխարհագիրն յիշատակն կը համարի և այսպէս կըսէ.

« Այրի վանքն՝ Ս. Գրիգոր Լուսաւորչէ հաստատուած՝ որ էր Հայաս-
տանեայց հաւատոյ տունը՝ յորում կը գտնուի աստուածամուխ սուրբ
Գեղարդն կենարարին արեամբ ներկուած, և Նոյայ տապանին սուրբ
տախտակը: Բայց արժաթէ երկփեղկ Գեղարդայ տապանը նորա



հետ միասին յիշմիածին կը գտնուի. և յիշատակ է Պռօշի իշխա-
նին իւր արձանագրաւ 1268 թուականին. ուր կ'ըսուի, թէ սա հետե-
ւող էր Զաքարեանց՝ քաջութեամբ և շինութեամբ, (որուն գաստակեր-
տը եկեղեցւոյս ստորեւ կը գտնուի). սա ընծայեց սուրբ զէնքը այս

սրբարանիս, յորում և պատրաստեց իւր հանգստարանը, գրելով տա-
ճարի խորանին հիւսիսակողմի կամարին. վրայ՝ յիշելով իւր տուած
ընծաները:

Ժամատունը և տաճարը ճարտարապետական արուեստով շի-
նուած են, միայն հիւսիսային որմը կը կազմէ յզկուած միապագադ
քարաժայռ մը, յորում ուրիշ եկեղեցիներ փորուած են. նախ ժամա-
տան մէջ երկու դուռ կը գտնուին արեւմտեան և արեւելեան. մին կը տա-
նի Գ եկեղեցեակն՝ որ փոքրիկ քառակուսի ժամատուն մի է, և ձեղուն
վերայ երկայն բոլորակ գմբէթ մի ունի, որ իբրեւ լուսամուտ կը ծառա-
յէ, գետնէն 28' բարձր է, զանազան զարդերով զրուակուած, բեմն, խո-
րանն և սեղանն այն միակտոր քարէն շինուած են. հիւսիսային կողմը
ստուար սիւններով երկու կամարակապ խորշեր շինուած են, յորում կը
գտնուին գերեզմանաց տապաններ, բայց արձանագրերն խանգա-
րուած են, և Պռօչեան զարմին հանգստարաններն կը համարուին, ո-
րոյ գաստակերտն է այս վիմափոր սրբարանը, ինչպէս արձանա-
գրուած է հարաւային որմին վերայ:

Դարձեալ Պռօշի նշանն է այն մեծ քանդակը՝ որ կը գտնուի հան-
գստարանի երկու կամարներուն վերայ. կիսաբոլոր կամարին մէջ տեղը՝
որ նախալիշեալ երկուքին վերայ կը գտնուի, կայ քօշի ստուար զլուխ
մի. բերնին մէջ ունի մանեակ մի, ուստի կը մեկնին երկու շղթաներ՝
կապելով երկու առիւծ և մէջտեղը արծիւ մի՝ որ մագլճքն գառ մի
բռնէր է: Ժամատան հիւսիսային կողմը տղբիւր մի կայ՝ ուստի կը
բղխի սեւադոյն և անհամ ջուր, որ յատակէն անցնելով կը թափի
գետը: Խորանին արեւելեան կողմէն՝ դուռ մի կը բացուի միւս վի-
մափոր Դ եկեղեցւոյն մէջ, որ ձևովն և երկայնութեամբ հաւասար և
նման է նախագրեալ եկեղեցւոյն, բիշ մի աւելի նեղ քան զայն և
խաչաձև, անոր նման գրուադազարդ լուսամուտ կաթողիկէ մ'ունի:
Եկեղեցւոյս արեւմտեան թևը միւսներէն աւելի զատուած կ'երևի, ա-
նոր համար ոմանք երկու եկեղեցի կը համարին: Կ'ըսուի թէ երբեմն
այս մատրան մէջ կը պահուէր Նոյեան տապանի մասն՝ որ այժմ
յիշմիրածին է: Յատակաձևին նայելով Ե եկեղեցին՝ մեծ ժամա-
տան արեւմտահիւսիսային կողմը կը գտնուի, փոքր, քառակուսի և
գմբէթաւոր, յորում է լուսամուտն. սորա մէջ ևս աղբիւր մի կայ, որ
Տիւպուայի քննութեան ժամանակ ստուած լինելով, հազիւ կրցաւ սո-
ղոսկելով ներս մտնել. ուրիշ բան մի չի յիշեր, ինչպէս այլք. անոր հա-
մար յայտնի չէ թէ արդեօք արձանագիր կայ. չգտնուեցաւ նաև Դ
եկեղեցւոյն մէջ, ուստի և մեր մատենագիրք աւելի հին կը կար-
ծեն զայս. անդ պահուած է, կ'ըսէ օտարազգին՝ վարդանայ յիշեալ
Նոյեան առապանին մասը: Այս երեք եկեղեցեաց վրայ ուրիշ մեծ եկեղե-
ցի մ'այլ կայ, որ արտաքին ճամբայ մ'ունի զէպի քարաժայռն. և նախ
կը տանի Չ նեղ և երկայն գաւիթը, և անտի մեծ դռնով՝ եկեղեցւոյն

մէջ, որ Ս. Սարգիս կը կոչուի և հաւասարակողմ քառակուսի է, Բ մեծ տաճարին նման, չորս ստուար սիւներու վրայ բարձրացած է կաթողիկէն իւր բոլորչի պատուհանով. չորս կողմը կան երկերկու որմնա սիւնք, որոց վրայ կը ձգուին կամարք. յատակը հարթ է, ոչ բեմ ունի, այսեղան, Շինողն է Պապսք որդի Պոսլի յամին 1288, Ժամատուն կը կոչէ զայս արձանագրութեան մէջ որ փորագրուած է հիւսիս — արեւելեան սեան վերնախարսխին վերայ:

Անոնցմէ քիչ մի հեռու արեւմտեան կողմը մեծ քարայր մի կը գտնուի, որոյ արտաքին երեսն փլփլած են. և ուրիշ շատ մի այլք և փռած կը գտնուին մենաստանի պարսպին ներսի և դրսի կողմերը. ումանք անոնցմէ բնական են, իսկ ոմանք ձեռագործք, յորս կան մատրուներ և խցկուներ, և են արդիւնք երկարատեւ համբերութեան և աշխատութեան: Սոքա երբեմն եղան աղօթից և վտանգաց ապաստանարանք, անոր համար կարելի է արձանագրուած շատ յիշատակներ գտնել. որովհետեւ եւրոպացի քննիչը կը վկայէ, թէ շինուածոց և այլերու չորս կողմը շատ մի արձանագիրներ կը գտնուին: Տիւպուա կ'ըսէ. վար ինկած հողակոյտ մը փորելով գտայ երկայնագոյն արձանագրութիւն մի՝ որոյ նման չեմ տեսած Հայաստանի մէջ. որովհետեւ որմոց բոլոր արտաքին երեսն մանրատառ արձանագրերով լի են. անոր համար զՀայս ամէն ազգէ աւելի արձանագրող կը համարի, և թէ վանքին ներսի և դրսի արձանագրութիւններով կարելի է գիրք մի շինել: Իսկ քարի տեսակին նկատմամբ՝ յորում փորուած են մատրուներ և եկեղեցին, կը համարի որ կարծրակուռ պորփիրի խառնուած մի լինի, գորշագոյն և սպիտակագոյն, մեծ մեծ բծերով. և հողի դանգուածներու մէջ կը գտնուին անկիւնաւոր ժայռի կտորներ, բայց շատը պորփիրէ: Միանձանց բնակարանքը համեմատ են եկեղեցիաց շէնքին, բոլոր քարաշէն են:

Շարունակիչ

